Տեղեկանք փոփոխվող հոդվածների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2003 թվականի դեկտեմբերի 17-ին

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 4. Այլընտրանքային ծառայության ուղարկվող քաղաքացին

Այլընտրանքային ծառայության ուղարկվում է այն քաղաքացին, որը մինչև հերթական զորակոչին նախորդող հունիսի 1-ը կամ նոյեմբերի 1-ը սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու վերաբերյալ դիմել է իր զինվորական հաշվառման տարածքային զինվորական կոմիսարին, և որի վերաբերյալ 8.1-ին հոդվածով սահմանված իրավասու պետական կառավարման մարմնի ղեկավարը, հաշվի առնելով այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի (այսուհետ՝ հանրապետական հանձնաժողով) եզրակացությունը, որոշում է կայացրել ուղարկել այլընտրանքային ծառայության: Հանրապետական հանձնաժողովը մշտապես գործող մարմին է և կազմված է տարածքային կառավարման, արդարադատության, առողջապահության, աշխատանքի և ~~սոցիալական հարցերի~~բարեկեցության, կրթության և գիտության, ոստիկանության ու պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինների, ինչպես նաև վարչապետի աշխատակազմի՝ ազգային փոքրամասնությունների և կրոնի ոլորտները համակարգող ստորաբաժանման մեկական ներկայացուցիչներից: Հանրապետական հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է վարչապետը: Հանրապետական հանձնաժողովի ներքին գործավարությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

Սույն օրենքի դրույթները չեն տարածվում պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ տարկետման իրավունք ստանալու հիմք ունեցող քաղաքացիների վրա:

(4-րդ հոդվածը խմբ. 02.05.13 ՀՕ-31-Ն, փոփ. 10.06.14 ՀՕ-66-Ն, խմբ. 21.06.18 ՀՕ-346-Ն)